

Հայ գրականություն

XII դասարան

Սեր

1.Սերը գոյության հանճարն է միակ. Սիրո հակառակը ամենևին էլ  
չսիրելը չէ. Մահն է պարզապես .... /Ալիսիա Կիրակոսյան/

Ես աչք ու դե լոյս, հոգի՛, առանց լոյս ` աչքն խաւարի...

Երբ սերն ի յաշխարհ եկաւ, եկավ իմ սիրտըս բնակեցաւ.../Ն. Քուչակ/

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա.

Ամմահական ջըրով լիքըն օսկե փընջան իս ինձ ամա.....

.....Չըտեսա քու դիդարի պես`դուն դիփունեն բաշ, Նազա՛նի...

Դու՛ն կըրակ, հա՛քածըտ կըրակ. վու՛ր մե կըրակին դիմանում

Յենց իմացար սոված էի, լի սեղանի հա՛մա եկա:

Քիզ հիդ խոսիլ էի ուզում`մոտըդ դամի համա եկա:

Ասի, քիզ հիդ լուսացընիմ, ուրախ ժամի համա եկա:

Մոռացիլ իմ... լավ միտըս չէ, թե ի՛նչ բանի համա եկա: ../Սայաթ-Նովա/

Անունդ թող փարոս լինի ինձ սուտ կյանքի ու դառը մահու դեմ...

Եթե սեր չկա- ինչի՞ համար պիտի չարչարվեմ չար աշխարհում...

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու, կարոտավառ երազում ենք միշտիրար.

/Վահան Տերյան/

Ինչքան որ հուր կա իմ սրտում- բոլորը քեզ....

Կուզե՛ս հոգիս ճամփա անեմ, սիրտս փռեմ ոտներիդ տակ.../Ե. Չարենց/

Բարև կուտամ, չես առնի, ոտքիդ կոխած հողն եմ, յա՛ր...

Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի, նա հավերժ է, նա անշեջ է, նա  
անմահ..... /Ավ. Իսահակյան/

Դու իմ վերջինը՝ թյուրիմացաբար և իմ միակը՝ ճակատագրով..

Առաջին սերը, ինչպես և հացը, ինչ էլ որ անես, միշտ կուտ է գնում..

Դեռ նոր հանդիպած մենք բաժանվեցինք, իրար նոր գտած՝ կորցրինք  
իրար... /Պարույր Սևակ/

Յաշք լիներ, կրկնվեր այն հրաշքը իրական, առուն ստվերս տաներ  
ջաղացականի աղջկան.....

Տարօրինակ է սերը, բարեկա՛մ. ոչ ոք նրանից բան չի հասկանում,

Յաճախ այնտեղ է նա հասկահանում, ուր չի գիշերում քարաքոսն անգամ.

**/Յամո Սահյան/**

## Գարուն

1.Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով  
Ժպտում են նորից անտառ ու ձորակ...

Գարունը այնքա՛ն ծաղիկ է վառել,  
Գարունը այնպե՛ս պայծառ է կրկին....

**/Կահան Տերյան/**

Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների.  
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ...

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,  
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,  
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,  
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք.  
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայրերին  
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր...

Ելնեմ, ծաղկումն է ձնծաղիկների,  
Ձյունից ինձ նայող աչերն համբուրեմ....

Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ,  
Որ գարունները գան ու չգնան.....

**/Յովհ. Շիրազ/**

Գարուն՛ն, շուտով կփռես դու քո թևերը կանաչ,  
Ու մանկիկս կթռչի ծիծեռնակին ընդառաջ:

Ժպտալուց առաջ բողբոջն է լալիս,  
Դռները բացեք, գարուն է գալիս:

Ողջ բնությունն է հրճվանքից լալիս,  
Դռները բացեք, գարուն է գալիս:

Երկինք ու երկիր մեզ ձայն են տալիս.  
-Դռները բացեք, գարուն է գալիս:

**/Յ. Սահյան/**

Գարնան առաջին նուրբ ծաղիկն եմ ես, ճերմակ թերթերով  
Ձնծաղիկն եմ հեզ:  
Պատռեցի ձյունի ծածկոցն սպիտակ ու թարմ բուրմունքով  
Իմ նուրբ թերթերի այս կանաչ, կանաչ գարունը բերի: /Վ. Դավթյան/

Իսկ վարդենին բացված քնքուշ ձայնով ասաց.  
-Ա՛յ քչքչան առվակ, ա՛յ լրաբեր սարյակ, ա՛յ գեփյուռնիկ թեթև,  
Յո՛վի՛կ մետաքսաթև, ա՛յ թուփ, ա՛յ կանաչ ծառ,  
Ամեն մեկդ մենակ գարուն հո չե՞ք բերի...  
Մենք բոլորս ենք մեկտեղ բացել գարուն շքեղ,  
Մենք բոլորս ենք բերում ողջ աշխարհին գարուն: /Յ. Արթենյան/

Ինչպես հոգիս ալ՝ թռած ժրաթև, պիտի վերըմպե հրճվանք ու արև,  
Եվ իր գարունին փարած ուժգնապես՝ պիտի վայելե գայն խենթերու պես...  
/Վահան Թեքեյան/

Մով մանուշակով ծաղկուն սարերեն արտուտն ու արոս ինձի ձեն տվին,  
Ու գարնան անուշ արևն ոսկեղեն ինձի ձեն տվին՝ սար ու ձոր ելնիմ:  
/Ավ. Իսահակյան/

## Մայր

Մա՛յր, սրբություն ամենասուրբ, մա՛յր, նրբություն ամենանուրբ...  
/Արշալույս սարոյան/

Յիշում եմ դեմքը քո ծեր, մա՛յր իմ, անուշ ու անգին,  
Լույս խորշոմներ ու գծեր, մա՛յր իմ, անուշ ու անգին: /Ե. Չարենց/  
Ա՛խ, քո տեսքին, անուշ լեզվին կարոտցել եմ, մայրի՛կ ջան.  
Երևե՛կ, երևե՛կ, երազ լինիմ, թըռնիմ մոտըդ, մայրի՛կ ջան:  
Երբ քունըդ գա, լուռ գիշերով հոգիդ գրկեմ, հանբույր տամ.  
Սըրտիդ կըպնիմ վառ կարոտով, լա՛մ ու խնդա՛մ, մայրի՛կ ջան:  
/Ավ. Իսահակյան/

Մա՛յրս, դու իմ միակն Էիր,ինչպես Յայաստանս,  
Տանս ճրագն Էիր և ծուխն Էիր տանս:  
Իմ կյանքի գինն Էիր, իմ ճիր Կաթինն Էիր,  
Եվ իմ բաժինն Էիր, և իմ բագինն Էիր.... /Յամո Սահյան/

Մեր տան անքունն Է մայրս, մեր անուշ քունն Է մայրս,  
Մեր տան ճրագն Է մայրս, մեր արեգակն Է մայրս,

-----  
Մայրս, մեր հացն Է մայրս, մեր տան աստվածն Է մայրս... /Յովհ. Շիրազ/

2. Հայ գրականության ամենաքնքուշ քնարերգուներից է Սիլվա Կապուտիկյանը: Մանկուց մեր շուրթերին է եղել նրա պատգամը. «Այս լուսնի տակ ուր էլ գնաս, քո մայր լեզուն չմոռանաս»: Նա նաև ամենախոհական, ամենահամարձակ բանաստեղծ-հրապարակախոսներից է, ում համար հայրենիքը սոսկ բնակավայր ու հասցե չէ, այլ արյան կանչ, սրտի բաբախյուն, հպարտ կենսակերպ: Ասվածի անհերքելի ապացույցն է «Մտորումներ ճանապարհի կեսին պոեմը», որը գրվել է 1960 -ին : Խորհրդային Հայաստանում 1965-ին առաջին անգամ նշվում էր հայոց Ֆեդասպանության 50-ամյա տարելիցը: Արդեն հրապարակի վրա էր «Անլռելի զանգակատունը», գրվել էին նաև այլ գործեր, բայց բոլորի շուրթերին այս երկու պոեմներն էին. մեկը՝ իբրև համանվագ մեր ողբերգության ու ինքնագնահատանքի, մյուսը՝ ապրելով վրեժ առնելու: Պոիմի վերնագիրը հաստատում է անկանգ երթը դեպի հավերժություն. Այդ ճանապարհի կեսին պետք է կանգնենք(ինչպես Կապուտիկյանը)՝ ի մի բերելու մեր անցածը, արժևորելու ներ ներկան և հաստատելու մեր ուխտը դեպի հավերժը. Դա նաև բանաստեղծուհու ապրած ճանապարհի կեսն է. նա արդեն հայտնագործել է իր «փոքր» հայրենիքը «մեծ» հայրենիքի կազմում, նա խորապես հասկանում է, որ իրավունք ունի խոսելու իր ժողովրդի մեծ ողբերգության մասին և արդեն պատրաստ է իր հանճարեղ գրչընկերոջ զայրույթը շարտել աշխարհի երեսին՝ Ո՛վ մարդկային արդարություն արդարություն, թող ես թքեմ քու ճակատիդ: Իր այս պոեմով Կապուտիկյանը տալիս է ապրելու, հարատևելու գաղտնիքի բանալին, և ես ուզում եմ, որ այդ բանալին միշտ լինի Հայաստանս լքող իմ տարեկցի ձեռքում, ուզում եմ փակել դեպի դուրս գնացող բոլոր ճանապարհները, ուզում եմ ասել՝ մի՛ հեռացեք, մի՛ դավաճանեք մեկուկես միլիոնին, «մեր անխափանելի ուժից այդպես անզսպորեն դուրս պոռթկացող երկշեղք հուշասյանը», միշտ հիշեք, որ «հեռանալը իսպառ անհնար է»: Կանգնե՛ք ճանապարհի կեսին, նայե՛ք սրբազան լեռանը և... մի՛ հեռացեք: Մնացյալը՝...լռություն(ինքդ բարձրաձայնի՛ր այն):

3. «Եվ այր մի՛ Մաշտոց անուն » պոեմը գրել է Պարույր Սևակը 1962-ին և նույն թվականին էլ տպագրել «Սովետական գրականություն» ամսագրում(№ 5): Պոեմը գրվել է Օշականի սուրբ Ննջեցյալի ծննդյան 1600- ամյակի առիթով: Ի սկզբանե Սևակը մտահղացել էր գրել «Մեսրոպյան Այբբենարան» խորագրով պոեմ և հայկական այբուբենի 36 կերպերի միջոցով հնչեցնել հայ պատմության, մշակույթի կարևորագույն դեպքերն ու նշանավոր մարդկանց անունները: Այս ընթացքում էլ մտահղացել է «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմը: Նա ցույց է տվել մաշտոցյան անըստգյուտ գյուտի ազգափրկիչ, հայափրկիչ եությունը՝ Մաշտոցին ամենից առաջ ներկայացնելով որպես վիրխարի քաղաքագետի:

**Մե՛ր հողի վրա, մե՛ր երկնքի տակ  
Մենք դարձել էինք օտարի գաղութ:**

Մաշտոցը իր գյուտով մեզ վերադարձրեց մեր լինելության համար  
չժանգոտվող մի նոր զենք, որ կոչվում է գրիչ«ճանաչել զիմաստութուն և  
զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»,

Որի դեմ պիտի դառնային անզոր նետ ու յաթաղան,  
Փղեր ու տանկեր և որ մեր ոգու անբառ կանչերին  
Պիտի որոտով միշտ արձագանքեր:

Պոեմի գլխավոր գաղափարը մաշտոցյան գյուտով ժողովրդի  
անմահության և կենսունակության գաղափարն է՝  
Թե մի տեղ վերջը դառնում է Սկիզբ: Թե հրաշք չկա, այլ կա լուկ կարիք:

Իսկ բերված հատվածը մեր կիսված ու օտարների մեջ բաժանված  
հայրենիքի տերը լինելու պատգամ ու կոչ է, որ միշտ արդիական է, և մենք  
դեռ պարտք ունենք՝ Մաշտոցին, Սևակին և մեր հայրենիքին  
վերադառնալու:

1912- ին մեր գրականության առնական խիզախության  
փողհարը՝Սիամանթոն, գրեց «Սուրբ Մեսրոպ» պոեմը՝ նվիրված հայ  
գրերի գյուտի 1500-ամյակին և Մաշտոցի ծննդյան 500-ամյակին,  
որտեղ«Կիկլոպ բանաստեղծը» մնացել է Մաշտոցի գյուտի ավանդական  
գնահատման սահմաններում:

4. Հայ գրականության մեծ Մասիսապաշտը՝Հովհաննես Շիրազը,  
մանկության տարիներին ճաշակելով որբության բոլոր  
դառանությունները՝հայոց պատմության մեծագույն Որբի՝ շղթայված  
Մասիսի որբ գերությանն է նվիրել իր իր ողջակեզ բանաստեղծության  
ընտրանին. Մասիսը Շիրազի անդարմանելի ցավն է, ազգային  
հիշողության խորհրդանիշը, հայ ժողովրդի հավերժության  
խորհրդանիշը, հայրենիքի միավորման անբեկանելի կռվանը: Արարատի  
բազմախորհուրդ պատկերները Շիրազը տալիս է բազմաթիվ  
բանաստեղծություններում՝ստեղծելով բազում դիպվածային բառեր ու  
կապակցություններ, որոնք միայն ինքը կարող է երկնել՝ հոգեկան ցավի  
անելանելիությունից տառապելով:

Սակայն անանց ցավին նա կարողանում է հակադրել նաև հավատը, որ  
Մասիսը, ի վերջո, տուն է գալու, և նա պատգամում է՝

Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,  
Որ շիրմում էլ՝դարավոր հուր կարոտից չմրսի:

Բանաստեղծի սիրտը այժմ հանգչում է Մասիսի ձյունների մեջ, և մենք  
համոզված ենք, որ այն վերադառնալու է Մասիսի հետ՝ հավետ հանգիստ  
գտնելու մեր Պանթեոնում, որտեղ նրա մարմինն է ննջում այն քարի տակ,  
որի վրա նստել է բանաստեղծը ու այնքան նայել իր Արարատին, մինչև  
քարը շիրիմ է դարձել իր վրա: Շիրազը մեզ պատգամել է՝ Ինձ

հոգեհանգիստ կատարեք միայն Մասիսի վրա, և մենք կիրականացնենք  
մեծ բանաստեղծի պատգամը: Շիրազն իր որդուն կտակել է՝  
Որդի՛ս, քեզ ի՛նչ կտակեմ, ի՛նչ կտակեմ , իմ բալիկ...  
Քեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սև ամպից,  
Որ տուն բերես շալակած արդարությամբ մեր անբիծ,  
Ու կբերես, իմ բալիկ, թեկուզ քո խեղճ թաթիկով,  
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝արդարության դուժն էծով,  
Ու երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,  
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես  
Ու կթաղես իմ սիրտը ձյունների տակ Մասիսի,  
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի:  
Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,  
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:

«Կուզեի նստել մի քարի վրա» բանաստեղծությունը նույնպես ասվածի  
լավագույն արտահայտությունն է: Կարոտի ու կորստյան ցավի, համայն  
հայրության համախմբման ու միասնական հայրենիքի լինելության  
գաղափարն է անընդհատ հնչեցնում: Եվ միանգամայն իրավացի է  
Սարոյանը, երբ գրում է.«Շիրազը շատ իրավացի է, որ Արարատ կերագե:  
Որովհետև ամեն հայ մեկ Արարատ էև Արարատ ըսել՝ հայ ըսել է»:

Հայ գրականության գրեթե բոլոր մեծերը երգել են Մասիսը.  
Խորենացի, Նարեկացի, Աբովյան, Թումանյան, Իսահակյան, Չարենց,  
Տերյան, Սևակ, Սահյան, Կապուտիկյան, Ծառուկյան.....  
Գրի՛ր՝ ում հիշում ես և ինչ գիտես:

Հանձնաժողովի նախագահ՝

/Ս. Աբազյան/